ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Հաստատում եմ

Տնօրեն Դ. Կոստանդյան

«31» 08 2022թ.

ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2022-2023 ուսումնական տարի

Կաբինետի վարիչ՝ Կարինե Շեգունց

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ _____ Ավանեսյան Սերգեյ
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ _____ Գևորգյան Արմիդա
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

ՏՎՅԱԼՆԵՐ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Մակերեսը (քմ)	Վերանորոգման կարիքը	Առկա գույքը, սարքավորումներ, նյութեր	Ուսումնադիդակտիկ նյութերը
Գրադարան	50	Ոչ	Սեղան - 15 Զգեստապահարան - 1 Աթոռ -9 Գրապահարան – 15	

Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի գրադարանը բացվել է 1966 թվականին: Ի սկզբանե գրադարանի առաքելությունն է եղել ապահովել ուսումնական գործընթացը, տեղեկատվության մատչելիությունը, նպաստել հետազոտական գործունեության, դասավանդման և կրթության զարգացմանը:

Գրադարանն ունի 3204 միավոր գիրք, որից՝ 2156-ը՝ գեղարվեստական, 1048-ը՝ գիտամեթոդական (այս թվերի մեջ ներառված չեն դասագրքերը): Այն հագեցած է հայ և արտասահմանյան բարձրարժեք գրականությամբ, հանրագիտարաններով, տեղեկատուներով և այլ անհրաժեշտ ուսումնական և գեղարվեստական գրականությամբ, ինչն ապահովում է թե՛ աշակերտների և թե՛ ուսուցչական կազմի պատրաստվածությունը: Ուսուցիչների կողմից մշակվում են ուսումնական ձեռնարկներ, վերջիններս էլ խթան են հանդիսանում աշակերտների ուսուցման մեջ որակի ապահովման համար:

Գրադարանն իր գործառույթների մեջ ունի կրթական ոլորտ, որը ներառում է ֆոնդերի հանալրումը, գրքի մշակումն ու պահպանումը, գրադարանից օգտվողների տեղեկատվական գրականության ապահովումը:

Գրադարանից օգտվելու պայմանները դյուրացնելու, այն ավելի հասանելի դարձնելու նպատակով ստեղծվել է նաև գրադարանի համակարգչային ցանց, որը ներկայումս ներառում է 80 միավոր գիրք, իսկ այլ անհրաժեշտ գրականության մուտքագրման աշխատանքները շարունակվում են: Գրադարանին կից գործում է ընթերցասրահ, որը թեև ունի վերանորոգման կարիք, սակայն իր հաճելի կահավորման շնորհիվ ունի իրեն հատուկ հարմարավետություն: Այստեղ կազմակերպվում են նաև գրական-գեղարվեստական երեկոներ, հիշարժան տարելիցներին՝ միջոցառումներ, վերապատրաստումներ, դասընթացներ և այլն: Յուրաքանչյուր տարվա փետրվարի 19-ին՝ գիրք նվիրելու օրը, Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները նվիրում են տարբեր ժանրերի գրականություն: Այդ գործընթացը ավանդույթ է դարձել ու շարունակական բնույթ է կրում:

ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ
2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձը	Ծանոթություն
1.	Ստուգել վարձութային և գեղարվեստական գրականության ֆոնդը:	օգոստոս	գրադարանավար	
2.	Կազմակերպված անցկացնել դասագրքերի բաժանորդագրությունը, բաշխումը: Յուրաքանչյուր աշակերտի ապահովել դասագրքերով:Հարստացնել գրքային ֆոնդը:	օգոստոս սեպտեմբեր	գրադարանավար դասղեկներ	
3.	Հաշվառել զոհված ազատամարտիկների միայնակ մայրերի, սակավ ապահովված և ծնողազուրկ երեխաներին: Նրանց ապահովել անվճար դասագրքերով,շրջապատել հոգատարությամբ ու հետևել, որ ճիշտ կիրառվեն կառավարության համապատասխան որոշումները:	օգոստոս սեպտեմբեր	գրադարանավար դասվարներ դասղեկներ	
4.	Դպրոցի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին ընդգրկել գրադարանի ակտիվի կազմում:	սեպտեմբեր	գրադարանավար դասղեկներ	
5.	Գրադարանի ակտիվի անդամների միջոցով կատարել դասագրքերի վերանորոգման աշխատանքներ:	սեպտեմբեր		
6.	Կահավորել ու տեսքի բերել գրադարանը: Ստեղծել անկյուն՝ մեթոդական գրքերը, ամսագրերը ցուցադրելու համար:	հոկտեմբեր	գրադարանավար	
7.	Ամիսը մեկ անգամ ստուգել դասագրքերի վիճակը:	տարվա ընթացքում	գրադարանավար	
8.	Կազմակերպել զրույց «Գիրքը մեր բարեկամն է» թեմայով	հոկտեմբեր	գրադարանավար	
9.	Ցերեկույթի կազմակերպում՝ նվիրված մեր հանրապետության անկախության 31-րդ ամյակին: Անկախության օրվա կապակցությամբ լույս ընծայել պատի թերթ:	սեպտեմբեր	գրադարանավար ակտիվի անդամներ	
10.	Դասղեկների համագործակցությամբ դասարաններում ստեղծել գրադարան-անկյուններ:	նոյեմբեր	գրադարանավար դասղեկներ աշակերտական խորհուրդ	
11.	Մասնակցել ուսուցչի օրվան նվիրված միջոցառմանը:	հոկտեմբեր	գրադարանավար ակտիվի անդամներ	
12.	Լույս ընծայել պատի թերթ՝«Գրքերի աշխարհում» վերնագրով:	նոյեմբեր	գրադարանավար ակտիվի անդամներ աշակերտական խորհուրդ	
13.	Ըստ դասարանների կազմել արտադասարանային ընթերցանության ցուցակները:	նոյեմբեր	գրադարանավար հայոց լեզվի և գրականության	

			ուսուցիչներ	
14.	Ստեղծել անկյուն,որտեղ կցուցադրվեն հայ առաքելական եկեղեցուն նվիրված գրքերն ու ամսագրերը:	դեկտեմբեր	պատմության ուսուցիչներ գրադարանավար	
15.	Դիտարշավ՝ «Տերյանական աշունը Գարիսյան համայնապատկերի հենքով»:	նոյեմբեր	գրադարանավար հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ	
16.	«Աշնան գույների ներքո» աշունը հայ գրողների բանարվեստում:	նոյեմբեր	գրադարանավար հայոց լեզվի ուսուցիչներ կերպարվեստի ուսուցիչ	
17.	«Լավագույն ընթերցող» մրցույթի անցկացում:	դեկտեմբեր	գրադարանավար հայոց լեզվի ուսուցիչներ դասղեկներ	
18.	Հայտարարել մրցույթ՝ «Գիրքը մարդու լավագույն բարեկամն է» թեմայով գրել շարադրություն:	հունվար	գրադարանավար հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ	
19.	Մանուկների մեծ բարեկամ Հովհաննես Թումանյանի հետ:	փետրվար	գրադարանավար տարրական դպրոցի աշակերտներ	
20.	Հայկական ժաղավրդական հեքիաթների քննարկում:	փետրվար	գրադարանավար 5-րդ դասարանի աշակերտներ	
21.	Նույն դպրոցի մանկավարժ Ալլա Առստամյանի «Սպասում» խորագրով շնորհանդես:	մարտ	գրադարանավար երիտասարդ մանկավարժներ	
22.	«Կլոր սեղան». Ժամանակակից գրողների ստեղծագործությունները՝ դպրոցի ուսուցիչների բանավեճի թեմա:	մարտ	գրադարանավար ուսուցիչներ	
23.	«Թե ուզում ես երգդ լսեն,ժամանակիդ շունչը դարձի՛ր». Գրական ցերեկույթ՝ նվիրված Եղիշե Չարենցին:	մարտ	գրադարանավար ակտիվի անդամներ դասղեկներ	
24.	«Հիշողությունն անուն ունի, 1937թ. զոհերը» Եղիշե Չարենց, Ակսել Բակունց		գրադարանավար հայոց լեզվի և պատմության ուսուցիչներ	
25.	Պատի թերթի լույս ընծայում. «Դռները բացեք գարուն է գալիս»	ապրիլ	գրադարանավար	
26.	Տարեվերջյան աշխատանքներ. ա) դասագրքերի հավաքում բ) կոմպլեկտավորում ըստ դասարանների	մայիս		